

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

09.06.2020թ.

Արձանագրություն թիվ 9

1. ՀԱԱՀ Ագրարային ճարտարագիտության, Ագրոբիզնեսի և տնտեսագիտության, Ագրոնոմիական, Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության, Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետների մագիստրոսական կրթական ծրագրերի/ուսումնական պլանների քննարկման և հաստատման վերաբերյալ.

*1.1. Հաստատել ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի մագիստրոսական կրթական ծրագրերը/ուսումնական պլանները (մեկ տարի տևողությամբ).*

- «Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիա և ավտոմատացում»,
- «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ»,
- «Կենսագործունեության անվտանգություն»,
- «Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում, հիդրոտեխնիկական կառուցվածքներ»,
- «Հողաշինարարություն, հողային կադաստր»,
- «Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիա և ավտոմատացում»:

*1.2. Հաստատել ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրոսական կրթական ծրագրերը/ուսումնական պլանները.*

- «Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա»՝ 1 տարի,
- «Ագրոբիզնես և ֆինանսներ»՝ 1.5 տարի,
- «Ագրարային մենեջմենթ»՝ 2 տարի):

*1.3. Հաստատել ագրոնոմիական ֆակուլտետի մագիստրոսական կրթական ծրագրերը/ուսումնական պլանները.*

- «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում»՝ 1 տարի,
- «Ագրոնոմիա»՝ 1 տարի,
- «Բույսերի պաշտպանություն»՝ 1 տարի,
- «Կայուն գյուղատնտեսություն»՝ 1 տարի,
- «Զերմատնային ագրոտեխնոլոգիա»՝ 1.5 տարի,
- «Օրգանական Գյուղատնտեսություն»՝ 2 տարի),

*1.3. Հաստատել անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի մագիստրոսական կրթական ծրագրերը/ուսումնական պլանները.*

- «Անասնաբուծություն»՝ 1.5 տարի,
- «Անասնաբուժական-սանիտարական փորձաքննություն»՝ 1 տարի,
- «Կենդանագիտություն և կենսատեխնոլոգիա»՝ 1.5 տարի:

*1.5. Հաստատել պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի մագիստրոսական կրթական ծրագրերը/ուսումնական պլանները.*

- «Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն»՝ 1 տարի,
- «Պարենամթերքի տեխնոլոգիա»՝ 1 տարի,
- «Մսնդամթերքի անվտանգություն»՝ 1.5 տարի:

2. ՀԱԱՀ ասպիրանտ Վարդան Արթուրի Կարապետյանի թեկնածուականատենախոսության հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Բուսաբուժական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնի առկա ասպիրանտ Վարդան Արթուրի Կարապետյանի «Բուսական հումքի չորացումով վերամշակման տեխնոլոգիայի կատարելագործում պտուղբանջարեղենային չիպսերի արտադրության նպատակով» թեմայով թեկնածուականատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

3. ՀԱԱՀ ասպիրանտ Ավետիք Արմենի Ալեքսանյանի թեկնածուականատենախոսության թեմայի փոփոխության և հրապարակային պաշտպանության երաշխավորման հարցի վերաբերյալ.

3.1. ՀԱԱՀ Հողաշինարարության և հողային կադաստրի ամբիոնի առկա ասպիրանտ Ավետիք Արմենի Ալեքսանյանի «Հողերի արդյունավետ օգտագործման կազմակերպման խնդիրները համայնքների խոշորացման պայմաններում» թեմայով թեկնածուականատենախոսության վերնագրում կատարել փոփոխություն և հաստատել հետևյալ ձևակերպմամբ. «Հողերի արդյունավետ օգտագործման կազմակերպման խնդիրները Գլաձոր խոշորացված համայնքի պայմաններում»,

3.2. Ավետիք Արմենի Ալեքսանյանի «Հողերի արդյունավետ օգտագործման կազմակերպման խնդիրները Գլաձոր խոշորացված համայնքի պայմաններում»

թեմայով թեկնածուական ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

4. ՀԱԱՀ Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Արմեն Սուրենի Ասատրյանի ատենախոսական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

4.1. ՀԱԱՀ Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Արմեն Սուրենի Ասատրյանի թեկնածուական ատենա-խոսական աշխատանքի թեման հաստատել «Ինովացիաների կիրառման հիմնահարցերը և դրանց լուծման ուղղությունները Հայաստանի Հանրապետության անասնաբուծության ճյուղում» վերնագրով՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ,

4.2. Գիտական ղեկավար հաստատել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Սերգեյի Ղազարյանին:

5. ՀԱԱՀ Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Նարեկ Պատվականի Հովակիմյանի ատենախոսական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

5.1. ՀԱԱՀ Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Նարեկ Պատվականի Հովակիմյանի թեկնածուական ատենախոսական աշխատանքի թեման հաստատել «ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության ներդրման խնդիրները և դրանց լուծման ուղիները» վերնագրով՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ,

5.2. Գիտական ղեկավար հաստատել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրաչյա Սերգեյի Ծպնեցյանին:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ